Արամ Իսաբեկյան - «Կերպարվեստ», Ե., հ.1, 2003

Արվեստի բոլոր ճյուղերը կախված են անհատականություններից: Շատ հաճախ մենք չգիտենք, թե ինչը իրականում ինչպես է տեղի ունեցել: Թերթը հնարավորություն կտա օբյեկտիվ տեղեկություն ունենալ կերպարվեստի անցուդարձի մասին:

Շատ հաճախ մենք լսում ենք լուրեր, որոնք իրականությանը չեն համապատասխանում: Ներկայացնում են ոմանց որպես հանճարներ: Բայց մենք գոնե լավ գիտենք, թե ով ով է: Կուզեի իմանալ փաստեր, այլ ոչ դրանց «ծաղկեցրած» և իրականությանը չհամապատասխանող տարբերակը:

Օգտվելով ներկայիս ամենաթողությունից ամեն մարդ ինչ կուզի կանի, չափանիշները խառնվել են՝ թե լավի, թե վատի: Մարդը շփոթության մեջ է ընկնում: Կուզեի, որ ճշմարիտ լիներ այս թերթը, չնյարդայնացներ նկարիչներին:

Հաճախ ուշագրավ ցուցահանդեսներ են կայանում արտասահմանում, որոնց տեղյակ չենք:

Թերթը պետք է ոչ թե արվեստագետներին «ջախջախի», այլ իրազեկի փաստերին: Ինչ-որ մեկը ցուցահանդես է բացել այսինչ տեղում, մեկը մեդալ, մրցանակ ստացավ: Այսպիսի փաստերին պետք է իրազեկել: Իրականությանը համապատասխանող, պրոֆեսիոնալ ինֆորմացիա պետք է ստանանք հավաստի աղբյուրներից, այս դեպքում «Կերպարվեստից»:

Շարունակ հանդիպում ենք տեսակետների, հիմնված ասեկոսեների ու կարծիքների վրա: Լավ կլիներ արվեստաբանները կարծիք և տեսակետ հայտնեին, որոնք կարդանք մեր թերթում և վստահ լինենք, որ այդ տեղեկությունները հավաստի են:

Արամ Իսաբեկյան

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր